ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վարիցելային (Ջրծաղիկի) պատվաստանյութ.
Ինչ է պետք իմանալ

Many vaccine information statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի մասին շատ հայտարարություններ հասանելի են հայերեն և այլ լեզուներով: Տես www.immunize.org/vis

1. Ինչու՞ պատվաստվել:

Վարիցելայի պատվաստանյութը կարող է կանխել **վարիցելան**:

Վարիցելան, որը նաև կոչվում է «ջրծաղիկ», առաջացնում է քոր առաջացնող ցան, որը սովորաբար տևում է մոտ մեկ շաբաթ: Այն կարող է առաջացնել նաև ջերմություն, հոգնածություն, ախորժակի կորուստ և գլխացավ: Այն կարող է հանգեցնել մաշկի վարակների, թոքաբորբի, արյունատար անոթների բորբոքման, ուղեղի և/կամ ողնուղեղի ծածկույթի այտուցվածության, ինչպես նաև արյան, ոսկորների կամ հոդերի վարակման: Որոշ մարդիկ, ովքեր հիվանդանում են ջրծաղիկով, տարիներ անց ունենում են ցավոտ ցան, որը կոչվում է «գոտեթրմոր» (նաև հայտնի է որպես հերպեսի զոստեր):

Ջրծաղիկը սովորաբար թեթև է, բայց այն կարող է բարդ լինել մինչև 12 ամսական երեխաների, դեռահասների, մեծահասակների, հղիների և թուլացած իմունային համակարգ ունեցող մարդկանց մոտ: Ոմանք այնքան են հիվանդանում, որ պետք է հոսպիտալացվեն: Դա հաճախ չի պատահում, բայց մարդիկ կարող են մահանալ ջրծաղիկից:

Մարդկանց մեծ մասը, ովքեր պատվաստված են վարիցելայի 2 դեղաչափերով, պաշտպանված կլինեն ողջ կյանքի ընթացքում:

2. Վարիցելայի պատվաստանյութ

Երեխաներին անհրաժեշտ է վարիցելայի պատվաստանյութի 2 դեղաչափ, սովորաբար՝
- Առաջին դեղաչափը 12-ից 15 ամսականում
- Երկրորդ դեղաչափը 4-ից 6 տարեկանում

Ավելի մեծ երեխաներին, դեռահասներին և **մեծահասակներին** նույնպես անհրաժեշտ է վարիցելայի պատվաստանյութի 2 դեղաչափ, եթե նրանք արդեն պաշտպանված չեն ջրծաղիկից:

Վարիցելայի պատվաստանյութը կարող է տրվել միաժամանակ այլ պատվաստանյութերի հետ: Նաև 12 ամսականից մինչև 12 տարեկան երեխան կարող է ստանալ վարիցելայի պատվաստանյութ՝ ԿԽԿ (կարմրուկի, խոզուկի և կարմրախտի) պատվաստանյութի հետ մեկ ներարկումով, որը հայտնի է որպես ԿԽԿՎ: Ձեր բժիշկը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություններ տալ:

3. Խոսեք ձեր բժշկի հետ

Տեղեկացրեք ձեր պատվաստման մատակարարին, եթե պատվաստանյութ ստացողը.
- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա վարիցելայի պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո** կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիա**
- **Հղի է** կամ կարծում է, որ կարող է հղի լինել. հղիները չպետք է պատվաստվեն վարիցելայի պատվաստանյութով
- Ունի **թուլացած իմունային համակարգ** կամ ունի **ծնող, եղբայր կամ քույր, որն ունի իմունային համակարգի ժառանգական կամ բնածին խնդիրների պատմություն**
- **Ընդունում է սալիցիլատներ** (օրինակ՝ ասպիրին)
- Վերջերս **արյան փոխներարկում է արել կամ ստացել է այլ արյան արտադրանք**
- Ունի **տուբերկուլյոզ**
- Նա **որևէ այլ պատվաստանյութ է ստացել վերջին 4 շաբաթվա ընթացքում**

Որոշ դեպքերում ձեր բժիշկը կարող է որոշել հետաձգել վարիցելայի պատվաստումը մինչև հետագա այցելություն:

Թեթև հիվանդություններ, օրինակ՝ մրսածություն, ունեցող մարդիկ կարող են պատվաստվել: Մարդիկ, ովքեր միջին ծանրության կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև ապաքինվեն, նախքան վարիցելայի պատվաստանյութ ստանալը:

Ձեր բժիշկը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություններ տալ:

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

4. Պատվաստանյութի հանդեպ ռեակցիայի ռիսկերը

- Վարիցելայի պատվաստումից հետո կարող է առաջանալ ձեռքի ցավ, ներարկման տեղում կարմրություն, ջերմություն և թեթև ցան:
- Ավելի լուրջ ռեակցիաներ տեղի են ունենում շատ հազվադեպ: Դրանք կարող են ներառել թոքաբորբ, ուղեղի և/կամ ողնուղեղի ծածկույթի վարակ կամ նոպաներ, որոնք հաճախ կապված են ջերմության հետ:
- Իմունային համակարգի լուրջ խնդիրներ ունեցող մարդկանց մոտ այս պատվաստանյութը կարող է կյանքին սպառնացող վարակ առաջացնել: Իմունային համակարգի լուրջ խնդիրներ ունեցող մարդիկ չպետք է ստանան վարիցելայի պատվաստանյութ:

Հնարավոր է, որ պատվաստված անձի մոտ ցան առաջանա: Եթե այն առաջանա, վարիցելայի պատվաստանյութի վիրուսը կարող է տարածվել չպատվաստված մարդու վրա: Յուրաքանչյուր ոք, ում մոտ ցան է հայտնվում, պետք է հեռու մնա նորածիններից և թուլացած իմունային համակարգով մարդկանցից, մինչև ցանն անհետանա: Ավելին իմանալու համար խոսեք ձեր բժշկի հետ:

Որոշ մարդիկ, ովքեր պատվաստված են ջրծաղիկի դեմ, տարիներ անց հիվանդանում են գոտեթմորով (հերպեսի զոստեր): Պատվաստումից հետո սա շատ ավելի հազվադեպ է, քան ջրծաղիկի հիվանդությունից հետո:

Բժշկական միջամտություններից հետո մարդիկ երբեմն ուշագնաց են լինում, այդ թվում՝ պատվաստումից հետո: Տեղեկացրեք ձեր բժշկին, եթե դուք գլխապտույտ, տեսողության փոփոխություն կամ ականջներում զնգոց ունեք:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ քիչ հավանականություն կա, որ պատվաստանյութը ևս լուրջ ալերգիկ ռեակցիա, այլ լուրջ վնասվածքներ կամ մահ կարող է առաջացնել:

5. Ի՞նչ կլինի, եթե լուրջ խնդիր կա:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ պատվաստված անձի՝ կլինիկայից հեռանալուց հետո: Եթե դուք տեսնում եք ծանր ալերգիկ ռեակցիայի նշաններ (ցան, դեմքի և կոկորդի այտուց, շնչառության դժվարություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **9-1-1** և մարդուն տեղափոխեք մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք ձեր բժշկին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հաղորդել Պատվաստանյութի անբարենպաստ իրադարձությունների հաղորդման համակարգին (VAERS): Ձեր բժիշկը սովորաբար կներկայացնի այս զեկույցը, կամ դուք կարող եք դա անել ինքներդ: Այցելեք VAERS-ի կայք **www.vaers.hhs.gov** կամ զանգահարեք **1-800-822-7967** հեռախոսահամարով: VAERS-ը նախատեսված է միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար, և VAERS-ի անձնակազմի անդամները բժշկական խորհրդատվություն չեն տալիս:

6. Պատվաստանյութի արդյունքում վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութի արդյունքում վնասվածքների փոխհատուցման ազգային ծրագիրը (VICP) դաշնային ծրագիր է, որը ստեղծվել է փոխհատուցելու այն մարդկանց, ովքեր կարող են վնասվածքներ ստանալ որոշակի պատվաստանյութերից: Պատվաստման հետևանքով ենթադրյալ վնասվածքի կամ մահվան վերաբերյալ հայցերի ներկայացման ժամկետը կարող է լինել երկու տարի: Այցելեք VICP-ի կայք **www.hrsa.gov/vaccinecompensation** կամ զանգահարեք **1-800-338-2382** հեռախոսահամարով ծրագրի և հայց ներկայացնելու մասին տեղեկենալու համար:

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր բժշկին:
- Զանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության բաժին:
- Պատվաստանյութերի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Սննդամթերքի և դեղերի վարչության (FDA) կայքը՝ **www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines**:
- Կապ հաստատեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) հետ:
  - Զանգահարեք **1-800-232-4636** (**1-800-CDC-INFO**) կամ
  - Այցելեք CDC-ի կայք **www.cdc.gov/vaccines**:

Armenian translation provided by California Department of Public Health, Immunization Program